654

003
X - 30

8

39

5 MAY 2005

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

003
Կ-30

ՀԱՅ ԳՐԻ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

ՄԵԾ ՅՈԲԵԼԵԱՆԸ

412—1512—1912

1002
Գ 387

Գրեց

ԳԷՈՐԳ ԱԼԹՈՒՆԵԱՆ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Գ.Ա. Публичная Библиотека
1922
անուն Ա. Մեծի անուն
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Էլեկտրաշարժ տպարան Մայր Աթոռոյ

4 FEB 2013

654

Հրամանով

Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե.

ՍԲԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Ամենայն Հայոց

Ս. ՄԵՍՐՈԲ

Բարեգործական Հոիփսիմեան Դպրոց

ՄԵԾ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Այս տարի լրանում է չորս հարիւր տարի այն օրուանից, երբ առաջին հայերէն գիրքը տպուեցաւ և հազար հինգ հարիւր տարի, երբ առաջին անգամ Հայկական գիրն ստեղծուեցաւ։ Բոլոր մանր ու խոշոր յոբելեանների մէջ այդ յոբելեանը ամենամեծն է, որ հայը մինչև օրս կատարել է։ Հայկական տառերի չորսհարիւրամեայ յոբելեանը և Հայոց գրերի գիւտի հազարհինգհարիւրամեակը արտաքոյ կարգի կարևոր ու նշանակալից մի տօն է մեզ հայերիս համար։ Նա մեր գրականութեան, մեր մտաւոր յառաջադիմութեան ու ընդհանրապէս մեր ազգային քաղաքակրթութեան տօնն է։ Այս տարուայ մեծ յոբելեանը տօնն է այն ամենի, ինչ որ մենք հայերս հանդէս ենք բերել մտաւորի, հոգեկանի և գրականի շրջանում։ Գրի, գրականութեան երևոյթն այժմ այնքան ընդհանրացած է, որ մենք նոյն իսկ չենք էլ կարող լաւ ըմբռնել նրա նշանակութիւնը, այդ նշանակութեան անգին արժէքը, որովհետև կարծում ենք, թէ

ազգերը միշտ էլ գիր են ունեցել, մարդիկ առանց գրի երբէք չեն եղել։

Բայց այդպէս չէ ի հարկէ։ Մարդկութեան անցեալը մեզ պատմում է, որ սրանից հազարաւոր տարիներ առաջ շատ ազգեր գիր չեն ունեցել, իսկ աւելի առաջ ոչ մի ազգ չէ օգտուել այդ աստուածային շնորհից։ Գրի գործածութիւնը 7—8 հազար տարի է, որ յայտնի է մարդկութեանը. դրանից առաջ մեզ յայտնի չէ ոչ մի տեղեկութիւն մարդկութեան վիճակի մասին։ Այն հեռաւոր, խաւար ու միգապատ օրերին մարդիկ ապրում էին երեխաների նման, կտրուած աշխարհի միւս մասերից, մարդկային միւս խմբերից—լոկ ներկայով. նրանց համար անցեալը իրականութիւն չէր։ Ժամանակը չունէր այն կրթիչ նշանակութիւնը, ինչ որ նա այսօր քաղաքակիրթ աշխարհում ունի։ Մարդկանց մէջ չկար մի միջոց, որով հնարաւոր լինէր պահել, պահպանել անցեալ սերունդների աշխատանքը, նրանց ձեռք բերած փորձերը։ Գիր-գրականութիւն չունեցող մարդկութիւնը չէր կարող անցած սերունդների՝ իւր պապերի ու հայրերի իմաստութիւնից օգտուել, որովհետև այդ իմաստութիւնը շատ շուտով մոռացուում էր և չկար մի հնար, որով կարելի լինէր բռնել, պահել ու ամրացնել այդ անցեալը։

Յիշողութիւնն էր միայն, որով գրից զուրկ մարդկութիւնը պարծենալ կարող էր։ Անգիր կերպով, բերնէ բերան անցնելով, սերունդից սերունդ թռչելով էին միայն պահպանում որ և է տեղի անցեալ աշխատանքները և հասնում ներկային։ Բերանացի աւանդութիւնն էր այն միակ միջոցը, որով զանազան սերունդներ իրար մասին որ և է հասկացողութիւն էին կազմում։ Նոյն բերանացի հաղորդութիւնն էր, որով տարածութեամբ իրարից անջատ, հեռու և մօտիկ մարդիկ իրար հետ խօսել, իրարու միտք հաղորդել կարող էին։

Սակայն այդ միջոցը շատ խախուտ և անհաստատ էր, որովհետև մարդկանց յիշողութիւնը միատեսակ զօրեղ չէ և մարդիկ միատեսակ ընդունակ չեն որ և է իրողութիւն նոյնութեամբ և պարզութեամբ հաղորդելու։ Դրա փառաւոր ապացոյցն անշուշտ այսօր մեր աչքի առաջն է։ Պատմական մի նշանաւոր երևոյթ ժողովրդի մէջ առանց արձականգի չի մնում։ Իւրաքանչիւր քիչ թէ

շատ աչքի ընկնող դէպք և իրողութիւն պատմուում է ժողովրդի մէջ անգիր կերպով— բերնէ-բերան ու այդ եղանակով հաղորդուում յաջորդ սերունդներին։ Բայց միևնոյն դէպքը զանազան մարդկանց կողմից միևնոյն եղանակով չի պատմուում։ Նայած պատմողի յիշողութեանը, երևակայութեանը, նրա դիտելու և պատմելու ընդունակութիւններին— նրա պատմութիւնը ենթարկուում է քիչ թէ շատ փոփոխութիւնների. և քանի շատ լինի հաղորդող անհատների կամ սերունդների թիւը, քանի մեծ լինի դէպքի վրայով սահած, անցած ժամանակի տևողութիւնը, այնքան մեծ կըլինի առաջ բերած տարբերութիւնը, այնքան անճանաչ կըլինին այդ դէպքը և դէպքի մասին եղած պատմութիւնը։

Չնայած բերանացի աւանդութեան անհաստատ և խախուտ դրութեանը, մարդիկ տասնեակ և հարիւր հազարաւոր տարիներ շարունակ օգտուել են դրանից, բերնէ բերան, սերունդէ սերունդ հաղորդել անցեալից մնացած թոյլ յիշողութիւնները, անցեալ ժամանակների, դէպքերի և նշանաւոր հերոսների գործերի թոյլ արձականքը։ Այդ

եղանակով ձեռք բերուած հատ ու կտոր տեղեկութիւններն ընդհանուր առմամբ մութն են ու աղօտ. ահա այդէ պատճառը, որ մենք առանձին հպարտութեամբ երբեխայ կարող ենք անուանել գրից զուրկ մարդկութիւնը, երբեխայ այն մտքով, որ նա ապրել է լոկ ներկայով, ներկայի համար, անցեալը չի ճանաչել և ապագայի մասին հոգս ու ծրագիր չի ունեցել։

Բայց մարդկութիւնն այդ վիճակի մէջ մնալ չէր կարող. բնութիւնը տուել է մի ահագին գանձ, ամենամեծ գանձը, որ մարդն ունի և որի շնորհիւ ձեռք են բերուում միւս՝ երկրորդական գանձերը. դա մարդու բանականութիւնն է։ Շնորհիւ հասկանալու, դատելու և ըմբռնելու ընդունակութեան է, որ մարդը բարձրացել, տարբերուել է իրան շրջապատող բնութիւնից՝ կենդանական աշխարհից. Եւ շնորհիւ բանականութեան է, որ մարդը չի կարողացել երկար դիմանալ առանց գրի ու գրականութեան։ Կեանքը հետզհետէ բարդանալով և նրբանալով մարդուն ստիպել է ստեղծել մի միջոց, որով հնարաւոր լինէր հաստատուն և անփոփոխ կերպով հաղորդել մեր մտքերն ու ցանկու-

թիւնները, դրոշմել անցեալի դէպքերը անքակտելի կերպով ու աւելի հիմնաւոր կերպով քաշել ապագայի հոգսը։

Մի սերունդ չէ, որ զգում է այդ կարիքը. դարեր ու հազարամեակներ են սահում, մինչև որ թոյլ փորձերը փառքով են պսակւում և մարդկութեանը յաջողւում է ձեռք բերել սկզբում որոշ պայմանական պատկերներ՝ նկարելու այս կամ այն միտքը, այս կամ այն խօսքը և ապա պայմանական նշաններ — արտայայտելու այս կամ այն հընչիւնը։

Այդ շրջանը մարդկային կեանքի մէջ ամենափառաւոր վարկեանն է. այդ ժամից նա ունէր մի միջոց — տեսածն ու լսածը, ցանկացածն ու մտածածը դրոշմել քարերի և աղիւսների վրայ, բռնել, կանգնեցնել մի բոպէ ժամանակի անիւը և նրա թրթիռները հաստատուն, ճշմարտապատում և հաւատարիմ կերպով հաղորդել յաջորդ սերունդներին։ Հաստատապինդ քարերն և զրանիտէ սև ժայռակոյտերը ծածկւում են նոր ձեռք բերած գանձով — նշանագրերով. և ուրախ ու հպարտ մարդկութիւնն այդ անդրդուելի ժայռերի վրայով դալիք ժամանակներին

պատմում է իւր աստուածների ու հերոսների, իւր ահաւոր կռիւների ու շարժումների մասին։ Աղիւսն ու քարը, սև ու ամուր ժայռը բախտ են ունենում լինելու մարդկութեան առաջին գիրքը — մի տեղ, ուր արդէն քաղաքակրթութեան շէմքը ոտք դրած մարդկութիւնը գրում է իւր պատմութիւնը։ Ժամանակը՝ շնորհիւ գրերի հետզհետէ սկսում է վայր առնել վրայից հաստ ու անթափանց քողը և տարածութիւնը կամաց կամաց բաց է անում իւր անդընդախոր անկիւնները. սերունդներն իրար մօտենում են, աշխարհի զանազան անկիւններում ապրող ցեղերն իրար հասկանում են, իրար մօտ գալիս։

*
* *

Սակայն այդ հրաշալի գիւտը բոլոր ժողովուրդների մէջ միատեսակ և միաժամանակ չէ եղել։ Աշխարհագրական և բնական աւելի բախտաւոր շրջաններում ապրող ժողովուրդները, որոնք հնարաւորութիւն ունէին ուրիշ ցեղերի հետ աւելի շուտ ու յաճախակի յարաբերութիւն ունենալու, բնականաբար աւելի շուտ պիտի զգային գիր ունենալու պա-

հանջը։ Մասնաւորապէս առաջ գնալու ներքին մղումը մի կողմից, շարժուն ու կենդանի վաճառականութեան միջոցով միւս ցեղերին ճանաչելն ու մօտենալը միւս կողմից զօրեղապէս հրապարակի վրայ են դնում գիր ու գրականութիւն ունենալու անհրաժեշտութիւնը։ Ծովերի ափերին ու մեծ գետերի հովիտներում ապրող ժողովուրդները համեմատաբար աւելի շուտ են կարողանում այդ պահանջին բաւարարութիւն տալ։ Նշանագրերի գիւտն ու գործածութիւնը՝ ամեն անգամ իւրատեսակ և յատուկ կերպով՝ թափանցում է հետզհետէ նաև միւս ժողովուրդների մէջ ու ցեղերն ու ազգերը իրար յետևից թևակոխում են քաղաքակիրթ ազգութիւնների շարքը։

*
* *

Մեզ հայերիս համար մեծ բախտ է ու ազգային պարծանք, որ մենք ևս բաւական երկար ժամանակ վայելում ենք այդ ասուածային պարգևի, գրի ու գրականութեան պտուղները։ Այսօր մենք ևս առանց մի բոպէ վարանելու և տատանուելու համարձակօրէն մեզ քաղաքակիրթ ազգերի շարքն ենք դասում դարձեալ գրի և գրականութեան շնորհիւ։ Հազարաւոր տարիների փոքր ու մեծ դանձերի մէջ չկայ մի ուրիշը, որ այսօր դարերի երկար շարքի միջով կանգնի երկնաբարձ գլխով հպարտ ու սիգապանծ ու փորձառու հայեացքն ուղղելով ներկայ սերընդին բացականչել կարողանայ. ես եմ քո փառքը—ամենամեծը, որ դու ունիս, իմացիր պահել ու պահպանել այդ։—Այդ դանձը հայի գիրն ու գրականութիւնն է, նրա դպրոցն ու դպրութիւնը, նրա քաղաքակրթութիւնը։

Հետևենք մեր գրի և գրականութեան սկզբնաւորութեանը։

*
* *

Հինգերորդ դարն էր, մեզանից 1500 տարի առաջ. այն ժամանակն էր, երբ Հայկական արքայական գահի վրայ դեռ բազմում էր հայ Արշակունի թագաւորը, երբ դեռ գոյութիւն ունէին Հայկական մեծ պետութեան թէկուզ թոյլ ճնացորդները, երբ Հայոց մայրաքաղաքում՝ Վաղարշապատում դեռ տեղի էին ունենում հայ զօրագնդերի զօրահանդէսներ, Հայոց մայրաքաղաքի վրա-

յով դեռ ծածանուում էր Արշակունիների ար-
ծուանի դրօշակը։

Սակայն գրի ու գրականութեան ծագումն
ու ապրանաւորութիւնը, այդ հրաշալի գանձի
պահանջն ու կարիքը հայ թագաւորների, իշ-
խանների, հայ աշխարհիկ տարրի մէջ չէ, որ
զգացուում է ամենից առաջ և ամենից ուժեղ
կերպով։ Մենք դրանից առաջ ունեցել ենք
քաղաքական աւելի փայլուն շրջաններ, երբ
հայ զօրականի սուրը աւելի կորուկ է եղել
և հայ թագաւորի խօսքը շատ աւելի հեռուն
լսելի։ Տիգրան Մեծի օրով մեզ յայտնի չէ
հայ գիր ու գրականութիւն։ Տիգրանի ու
նրա յաջորդների օրով չէր էլ կարող հայ
գրերի կարիքը խորապէս զգացուել, որով-
հետև Հայոց աշխարհը մերթ Պարսից, մերթ
Հռոմայեցւոց ազդեցութեան տակ՝ իւր գրա-
ւոր կարիքներին օտար գրերով էր բաւա-
կանութիւն տալիս։ Հայ թագաւորները իրենց
դրամներն ու հրովարտակները օտար լեզուով
են գրում։ Մարդիկ չէին զգում սեփական
գիր ունենալու, յատուկ գրականութիւն ու-
նենալու պահանջը, կամ զգում էին չափա-
զանց թոյլ կերպով։ Սակաւաթիւ հայերը,
որոնք պաշտօն էին ունենալու արքայական

և իշխանական դիւաններում և ղեկավարում
էին ամբողջ դիւանական գործը, բաւական
է, որ գիտենային տիրող լեզուն—կամ պարս-
կերէնը, կամ լատիներէնն ու յունարէնը—
զգացուած պահանջն արդէն բաւականու-
թիւն էր գտնում։ Շատ անգամ էլ այդ անձ-
նաւորութիւնները օտար ազգութիւններից
էին լինում։ Բուն հայ ժողովրդի պահանջ-
ների համար դեռ հարկաւոր չէր հայ գիրը
և Հայոց արքունիքը երկար դարեր յար-
մարւում է դրութեանը. պէտք եկած տեղում
գործ է ածում օտար գրեր։

Դրութիւնը փոխւում է բոլորովին, երբ
քրիստոնէութիւնը Հայաստան է մուտք գոր-
ծում։ Այն օրերին, երբ Գրիգոր Լուսաւորիչ
իւր բազմաթիւ օգնականների հետ Հայաս-
տանում քրիստոնէութիւն էր քարոզում ու
հեթանոս հայերին լուսաւորել ձգտում, դար-
ձեալ օտար գրերից ու գրականութիւնից էր
օգտւում։ Քրիստոնէութեան աղբիւրը՝ Աւե-
տարանն ու Աստուածաշունչը օտար լեզու-
ներով էին, ասորերէն, յունարէն. և Հայի
Լուսաւորիչը ստիպուած էր դիմել այդ օտար
լեզուներին, այնտեղից, օտար ազգերի գրա-
կանութիւնից քաղելու քրիստոնէութեան

սերմերը ու ապա ցանել հայ հողի վրայ։
Բնական է, որ աշխատանքը չափազանց մեծ
էր ու դժուարին ու արդիւնքը սպասածից
աւելի պակաս։ Հայ քարոզիչը կանգնած էր
մի հսկայական դժուարութեան առաջ. քրիս-
տոնէութեան նոր պատգամները նա պիտի
հասկացնէր, տարածէր հեթանոսութիւնից
նոր դարձած հայերին, բայց այդ գործն
հիմնաւոր կերպով կատարելու համար հար-
կաւոր էր նոր կրօնի տարրերը սովորեցնել,
հարկաւոր էր դպրոց։ Իսկ դպրոց չունէին
այդ ժամանակ հայերը, դպրոցի հետ չու-
նէին նաև ուսուցիչ։ Հայը գիր չունէր, որով
սովորէր. հայ վարդապետը սովորեցնելու ոչ
մի հնար չունէր։ Նրա միջոցները օտար
լեզուներն էին, որոնք չէին նպաստում նպա-
տակին հասնելու և յուսահատեցնում էին
հայ քարոզչին։ Մինչդեռ հային շրջապատող
ազգերը — յոյն, հռոմայեցի, ասորի, հրեայ —
ունէին իրանց սեփական գիրն ու գրակա-
նութիւնը և կրօնի ոգին ու տարրերը բա-
ցատրելիս օգտւում էին հարազատ գրակա-
նութիւնից կամ քրիստոնէութեան լոյսը
առնում էին բուն իսկ աղբիւրից՝ մայրենի
լեզուով գրուած աւետարանից, հայ վար-

դապետն ընդհակառակը իւր քարոզչական
դառն վիճակի մէջ նախանձով էր նայում
իւր բախտաւոր հարևաններին։ Քանի պա-
հանջը մեծանում է որքան կարելի է շատ
հայերի քրիստոնեայ դարձնել ու հիմնովին
խորտակել հեթանոսութեան ուժն Հայաստանում, այնքան էլ սեփական սուրբ Գիրք,
բուն Հայկական տառերով գրուած աւետարան ունենալու կարիքն է հերթական դառնում ու զբաղեցնում լաւագոյն հայ վարդապետներին։ Այդ պահանջը գնալով սաստկանում է և վերջապէս իւր գագաթնակէտին է հասնում հինգերորդ դարի սկզբում, որանից 1500 տարի առաջ, որտեղից և Հայոց ազգին փրկութիւն էր գալու։

Մեր ազգային պատմութիւնն այդ ժամանակ երեք նշանաւոր անուն է մեզ աւանդում. ժամանակի Հայոց թագաւոր Վռամշապուհ, Գրիգոր Լուսաւորչի վերջին շառաւիղ Սահակ կաթողիկոս և Տարօնեցի մի հասարակ վանական — Մեսրոպ Մաշտոց։ Սը հայ գրի ու գրականութեան, դպրոցի ու կրթութեան սկիզբն էլ կապուած է հենց այդ երեք հռչակաւոր անուններին հետ։ Հայոց աշխարհում աշխարհական Ն հոգեւոր իշխա-

1002
ՀՏԱ

նութիւնները, Հայոց թագաւորն ու Հայոց կաթողիկոսը միացել, ձեռք էին կառկառել միահամուռ ուժերով հնարներ ստեղծելու սկիզբ դնելու համար սեփական գրի ու գրականութեան։ Եւ այդ համերաշխ գործակցութիւնը պակուում է ամենափառաւոր յաջողութեամբ և հինգերորդ դարի Հայը ապրում է Հայոց պատմութեան, կեանքի ու գրականութեան ոսկեդարը։

Մի փոքր աւելի մօտիկից նայենք Հայկական անցեալի այդ փառաւոր շրջանին։

*
* *

Ժամանակի կաթողիկոսն, ինչպէս ասացինք, ս. Սահակն էր, Մեծն Ներսէսի որդին, Լուսաւորչի վերջին շառաւիղը։ Հեզ, բարեսիրտ, քրիստոնէական ոգով տոգորուած մի անձնաւորութիւն էր ս. Սահակը։ Կրթուած լինելով հելլենական գրականութեան ու արուեստի մէջ, ամբողջ հոգով հակուած էր յունաց կողմը, թէև Հայաստանի քաղաքական բաժանուածութեան պատճառով ստիպուած էր Պարսից հպատակուել և Պարսից մասի Հայաստանի մէջ ապրել։ Ս. Սահակ գինուած իւր դիրքի և աստիճանի բարձր

հեղինակութեամբ, Հայոց Վռամշապուհ թագաւորի հետ համերաշխ, աշխատում է Հայոց մութ աշխարհը քրիստոնէական լոյսով լուսաւորել, հայերին ամրապնդել նոր հաւատի մէջ և կենդանի խօսքը քարոզել։

Այդ օրերին էր ահա, որ Սահակ կաթողիկոսի մօտ մի մարդ է գալիս, մի սոսկ վանական՝ Հայաստանի հեռաւոր գաւառներից — Տարօնից. Վարդան անունով մի հասարակ մարդու որդի էր նա, Հացեկաց գիւղից։ Դեռ մանուկ հասակից վարժուել էր ժամանակի բարձր կրթութեան ու զարգացման մէջ — ուսել էր հելլենական դպրութիւնը։ Նա սկզբում ունեցել է աշխարհիկ ցանկութիւն և հակումներ. եղել է Հայոց արքայի դիւանի տեսուչ և կառավարիչ, երկար ժամանակ զբաղուել է հայ թագաւորների հրամանները գրելով և տարածելով — օտար լեզուներով, ի հարկէ։ Սիրել է զինուորական ծառայութիւնը, ցանկացել է պատերազմող բանակի մէջ մտնել. բայց Հայոց ազգի մի աննման բախտով թողնում է այդ մտադրութիւնը, տարուում է ժամանակի լաւագոյն մարդկանց յափշտակութեամբ, ընդունում է հոգևոր կոչումն ու կենդանի քարոզչի դերն ստանձնում։

Բաղ և անվեհեր Մեսրոպն այնուհետև ոչ մի բանի առաջ չի կանգնում. իւր ներքին աշխարհը կենդրոնացնելու և ամբողջացնելու համար նա մի առժամանակ առանձնանում, ճգնաւորական կեանք է վարում։ Սակայն շուտով իւր շուրջն է հաւաքում աշակերտներ ու սկսում է նրանց քարոզել քրիստոնէութիւնը։ Աշակերտների հետ միասին դիմում է ապա Հայաստանի ամենավտանգաւոր գաւառներից մէկը - «անկարգ ու անդարման» Գողթան գաւառը։ Հեթանոսութիւնը դեռ չէր ջնջուել Հայաստանի շատ մասերից։ Հարիւր տարի հազիւ լինէր, որ հեթանոս հայութիւնը քրիստոնեայ էր դարձել. բնականաբար դեռ շատ գաւառներում, Հայաստանի շատ խուլ և մեկուսացած անկիւններում կարող էր հեթանոսութիւնն ապրել և ժամանակ առ ժամանակ գլուխ բարձրացնել։ Գողթան գաւառը այդպիսի վայրերից մէկն էր։ Հարկաւոր էր խորտակել հեթանոս Գողթնցիների յամառութիւնը — հարկաւոր էր զօրեղ և ազդու քարոզիչ լինել Քրիստոսի վարդապետութեան։

Ու Մեսրոպը սկսում է քարոզել. ու այստեղ առաջին անգամ թերևս զգացւում է

այն մեծ պակասը, այն բուռն կարիքը, որին բաւարարութիւն տալով Հայոց համար նոր դարաշրջան էր բացուելու, հիմք էր դրուելու Հայոց մտաւոր բովանդակ կեանքին։ Այստեղ, այս բարբարոս ու հեթանոս Գողթնցիների մէջ գործելիս՝ Մեսրոպ առաջին անգամ ուժգնօրէն ու հզօրապէս զգում է սեփական գիր ունենալու մեծ կարիքը։ Նա տեսնում է, որ մենակ ինքը չէ կարող և հնարաւորութիւն չունի այդ կարիքին բաւարարութիւն տալ։ Զգում է, որ դպրոցներ են հարկաւոր. նախանձով է յիշում հարևան ազգերի բազմաթիւ դպրոցները, նրանց գիրն ու գրականութիւնը։ Միանգամից ըմբռնում է, որ չի կարելի հայ մարդկանց օտարագիր՝ յունարէն կամ ասորերէն գրուած աւետարանով քրիստոնէութիւն քարոզել։ Սեփական տառեր ու հայագիր Աստուածաշունչ ունենալու պահանջը միանգամից գալիս լցնում է Մեսրոպի սիրտը և նա այնուհետև յափշտակուած այդ մտքով մոռանում է ամեն բան. և մի աստուածային ոգևորութեամբ լցուած այդ կարիքի գիտակցութեամբ է ապրում։

Սակայն նա մենակ ոչինչ չէր կարող

անել. պէտք էր դիմել Հայաստանի կենդրոնը՝ հայ թագաւորների ու կաթողիկոսների մայրաքաղաքը—Վաղարշապատ, որտեղ թերևս օժանդակութիւն ու խորհուրդներ կարելի լինէր գտնել այդ մտքի իրագործման համար։

Ու մտքերի ու խորհուրդների ծփանքի մէջ տարուբերուելով Մեսրոբ Գողթան գաւառից դիմում է դէպի Վաղարշապատ։ Քանի մօտենում է սրբազան ու վեհաշուք մայրաքաղաքին, այնքան աւելի է զարկում նրա սիրտը, այնքան աճում է նրա անհանգստութիւնը։ Ահա նա տեսաւ մայրաքաղաքի գըմբէթները ու արքայական ապարանքի բարձր, հպարտ աշտարակները ու արծուանիշ մեծ դարբասով ներս մտաւ։

*
* *

Սահակ կաթողիկոսին մենք արդէն գիտենք և առաջուց զգում ենք Մեսրոբին ցոյց տուած նրա վերաբերմունքը։ Չէ՞ որ Հայոց կաթողիկոսն ևս պակաս չէր զգայ սեփական գիր ու դպրութիւն ունենալու կարիքը. չէ՞ սր նա ևս նոյնպիսի և աւելի դժուարութեանց էր հանդիպել և շարունակ հանդիպելու էր Քրիստոսի կեանքն ու ուսմունքը քարոզելիս։ Հայոց եկեղեցիներում յունարէն ու ասորերէն աստուածաշունչն էր լսելի։ աղօթքներն ու մաղթանքներն օտար էին հայ աղօթողների համար։ Կարիքը գնալով մեծանում, ծովանում էր և սեփական գիր ու դպրութիւն ունենալու պահանջը աւելի ու աւելի համակում հասկացող մարդկանց սրտերը։ Բնական է, որ Սահակ կաթողիկոսն առանձին ուրախութեամբ ու բերկրանքով ընդունէր Մեսրոբ քարոզչին ու պատրաստ լինէր նրա հետ միասին միջոց ու հնար փնտրելու ընդհանուր Հայոց անգարման ցաւին մի դարման գտնելու։

Հայոց մայրաքաղաքն այնուհետև մի սրտաշարժ ու յուզիչ տեսարան էր ներկայացնում։ Երբեմն կաթողիկոսարանում, երբեմն արքայական պալատում ժողովներ ու խորհուրդներ էին տեղի ունենում—աշխարհական ու հոգևորական անձերի մասնակցութեամբ։ Երկրի լաւագոյն գաւակները հաւաքուած հնարներ էին որոնում ստեղծելու Հայկական սեփական տառեր, ունենալու դպրոցներ և հիմք դնելու մայրենի հարազատ գրականութեանը։

Այն օրերը նուիրական էին Հայոց համ-

բողջ պատմութեան համար։ Երկիրը մի սըրբազան երկունքի մէջ բռնուած – ահաւոր ու խորհրդաշատ, Թագաւորն ու կաթողիկոսը, զինուորականն ու վանականը միաբանած իրար հետ, դարբնում էին հայի ապագայ կեանքի ուղին։ Հայոց Վռամշապուհ Թագաւորը պատուաւոր տեղ է բռնում այդ խորհրդակցութիւնների մէջ։ Նրա խորհրդով դեսպաններ են գնում Միջագետք Դանիէլ անունով մի ասորի եպիսկոպոսի մօտ, որի մասին իմացել էր Վռամշապուհ Թագաւորը, թէ Հայկական նշանագրեր ունի։ Եւ իրօք, Դանիէլը ունէր Հայկական նշանագրեր, որն և առնում բերում են Հայաստան։ Մեսրոբը մի անյագ ծարաւով սովորում է այդ նշանագրերը և անմիջապէս դպրոցներ է բաց անում սովորեցնելու նաև ուրիշներին։ Բայց մի փոքր անց, աչքի է ընկնում Դանիէլեան նշանագրերի պակասութիւնը. նրանք լրիւ չէին, անկարող էին արտայայտել Հայոց լեզուի մէջ եղած բոլոր հնչիւնները. ուրիշ խօսքով, Դանիէլեան տառերով չէր կարելի որ և է հայերէն գիրք գրել։ Բուռն և սրտանց ոգևորութեանն յաջորդում է անտանելի յուսախաբութիւնը։

Մեծ և ուժեղ ընաւորութիւնները սակայն չեն վհատւում, նեղութեան և անյաջողութեան ժամին վառւում են նոքա մի աստուածային եռանդով և անշեղ ու անսայթաք ուխտում են ամեն զոհողութիւններով հասնել իրենց նպատակին։

Վռամշապուհ Թագաւորի ու Սահակ կաթողիկոսի հրամանով ու խորհրդով Մեսրոբ վերցնելով իւր հետ մի քանի ընդունակ և ուշիմ աշակերտներ դարձեալ օտարութեան ուղին է բռնում։ Արդէն պարզ էր մայրաքաղաքում, որ միայն Մեսրոբին կարելի էր յանձնել Հայոց նոր նշանագրեր ստեղծելու ծանր ու դժուարին գործը։ Որովհետև Մեսրոբն էր միայն, որ ամբողջապէս լցուած էր այդ մտքով, ոգևորուած ու յափշտակուած էր ազգային գրի ու գրականութեան սկիզբ դնելու հոյակապ գաղափարով, ապրում ու տանջւում էր այդ մտքով։ Մեսրոբի երկար ճանապարհորդութիւնը Միջագետքի զանազան քաղաքներում ծանր և անհնարին երկունքի մի շրջան էր։ Հայոց ամենամեծ մարդը երկունքի մէջ էր — ծնելու Հայոց ամբողջ յետագայ շրջանի համար ամենամեծ գանձը, որի վրայ հայը կառուցա-

նելու էր իւրամբողջ վառքն ու պարծանքը, յոյսն ու ապաւէնը։

Երկար ու ծանր էր Մեսրոբի հոգեկան տանջանքը. ուր գնում էր, ում դիմում էր, անյաջողութեան էր հանդիպում։ Իւր հետ տարած աշակերտներին նա տալիս է յունաց և ասորոց դպրութիւնն ու արուեստը սովորելու, որպէս զի հմտանան սուրբ Գրքի ընթերցանութեանն ու բացատրութեանը։ Իսկ ինքը չի դադարում աղօթելուց և աշխատելուց, ճգնելուց ու տանջուելուց, մինչև որ Սամոսատ քաղաքում նրան յաջողւում է մի այբուբէն կազմել, որ իւր մէջ պարունակում էր Հայոց լեզուի մէջ եղած բոլոր հնչիւններն արտայայտող նշանագրեր։

Նոյն ուղղութեամբ շարունակ կենդրոնացած աշխատանքը, հոգեկան երկարատև ճգնութիւնն ու տանջանքը, տագնապն ու նեղութիւնը, սեփական լիակատար այբուբէն և դրա հետ միաժամանակ ազգային դպրոց և գրականութիւն ստեղծելու հնարաւորութիւնն ու բախտաւոր հեռանկարը այնպէս էին յափշտակել Մեսրոբին — այդ աննման մարդուն, որ նա գերագոյն վերացման մէջ մի երջանիկ վարկեանում յաջողում է լիակատար դարձնել Հայոց թերի այբուբէնը և այդպիսով իւր և իւրայիններին բոլոր հոգսերն ու տանջանքները փառաւոր ելքով պսակել։

Ամենամեծ գիւտն Հայոց պատմութեան մէջ արուած էր արդէն. Հայն ունէր արդէն սեփական տառեր ու հնարաւորութիւն կար այնուհետև բաց անել Հայկական ուսումնարան։ Հազար ու աւելի տարիների պատմական գոյութիւնից յետոյ միայն հային յաջողւում է այդ աննման գիւտն անել — ազգային հնչիւնների համար սեփական նշանագրեր ստեղծել։ Հազար ու աւելի տարիներ հայը գրել ու կարդացել էր օտար լեզուներով, երբեմն պարսկերէն, երբեմն յունարէն, մերթ ասորերէն։ Այժմ նա հնարաւորութիւն էր ստանում իւր մայրենի լեզուով գիրք ունենալու, իւր սեփական, հարազատ հնչիւններով կարդալու։

Հայոց մէջ մի գեղեցիկ աւանդութիւն կայ, որի համաձայն, երբ Մեսրոբ տեսիլքի մէջ ընկած կէս քուն կէս արթուն վիճակի մէջ, յափշտակուած էր ամբողջովին այդ գաղափարով և համակ վերացած — յանկարծ մի գերագոյն վարկեանում մարդկային մի

ձեռք է երևում, որ քարի վրայ գրում է Հայկական այբուբենի պակաս տառերը։ Այդ գեղեցիկ աւանդութիւնը մի պերճախօս վկայ է այն բանի, թէ հայերն ինչքան խորն էին ըմբռնել գրի պահանջը, և որքան բարձր են գնահատել այդ բարիքը. այնքան բարձր, որ նոյն իսկ աստուածային ծագումն են տուել դրան։ Եւ իրաւ, մեր ամբողջ պատմութեան ընթացքում մենք չունինք մի ուրիշ պարծանք, որին մենք այնպէս երախտապարտ լինինք, ինչպիսին է Մեսրոբի հոյակապ գործը։

*
* *

Մեսրոբի և նրա աշակերտների հրճուանքին չափ չկար։ Նորագիւտ տառերը լաւ գծագրելու և ձևաւորելու գործը Մեսրոբը յանձնում է Սամոսատ քաղաքում Հռոփանին, որն և յաջողութեամբ գլուխ է բերում։ Այնուհետև Մեսրոբ մի ցանկութիւն ունէր միայն, որքան կարելի է շուտ հասնել Հայաստան, իւր աստուածային գիւտը տանել մայր երկիրը և սկիզբ դնել նոր կեանքի։ Այդ մտքով ոգևորուած ճանապարհ է ընկնում դէպի մայրաքաղաք—դէպի Վաղարշապատ։

Այս անգամ բոլորովին այլ էր նրա գալուստը։ Առաջին անգամ անօգնական ու մի խեղճ վանական—նա գալիս էր Հայոց կաթողիկոսից օգնութիւն հայցելու, գալիս էր խնդրելու, որ մի ճար արուի գրի ու գրականութեան համար, իսկ այժմ նա իւր ձեռքում ունէր ցանկալի գիւտը. այժմ նա հպարտ ու գիտակից առաջ էր շարժւում իւր հետ տանելով մի ամբողջ ժողովրդի փրկութեան բանալին։ Իրենից առաջ գրերի գիւտի լուրն արդէն հասել էր Հայոց մայրաքաղաքը. այնտեղ իմացել էին նաև Մեսրոբի գալուստը, որն եկել մօտեցել էր արդէն մայրաքաղաքին։

Երախտագէտ սերունդը հասկանում է Մեծ Մարդու և նրա գտած տառերի արժէքը։ Այդ օրերին Հայոց Վաղարշապատ մայրաքաղաքում տեղի է ունենում մի հանդէս, որի նմանը շատ քիչ է տեսել Հայոց բազմադարեան պատմութիւնը։ Ամբողջ քաղաքը դուրս է գալիս ընդառաջ Մեսրոբին, որը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի սոսկ վանական։ Թագաւորն իւր նախարարների բազմութեամբ, Սահակ կաթողիկոսն իւր եպիսկոպոսներով ու վարդապետներով, մայրաքաղաքի շքեղ

հասարակութիւնը, բուն ժողովուրդը—ամենքը, ամենքը դուրս են գալիս ընդառաջ գնալու եկող Մեսրոբին։ Զինուորական մի հանդէս չէր այդ, որի նմանը Հայոց թագաւորները շատ են կազմակերպել, ոչ էլ պատերազմական մի արշաւանք։ Հայ ազգի լաւագոյն մասը դուրս էր գալիս ընդունելու իւր բարերարին, որ բերում էր իւր հետ ազգային ամենամեծ բարիքը—գրականութեան և ապագայ հոգևոր կեանքի հպարտ սկիզբը։ Եկողը մի սոսկ վանական էր, բայց տեսէք ինչպէս վերացել է ասպիճան ու դիրք, ինչպէս վերացել է ամեն տեսակի խարութիւն. հայ թագաւորն ու հայ կաթողիկոսը գրկախառնւում են Մեսրոբի հետ, իրանց հարազատի պէս գուրգուրում են նրան ու շատ աչքեր ուրախութեան հրճուանքի տակ թրջւում են, և բոլոր սրտերը անհուն բերկրանքով վառւում են։ Ամբողջ մայրաքաղաքի աշխարհախումբ բազմութիւնը բաց դաշտի մէջ—կապոյտ երկնքի տակ սրբանուէր կերպով ասնում է Հայոց պատմութեան մէջ եղակի այդ օրը, ասնում է միահամուռ և համերաշխ, առանց խարութեան։ Այդ ընդարձակ ու բազմազան հասարակու-

թեան մէջ մի բոպէ լռում են ամեն կարգի անհամաձայնութիւն ու բոլորն էլեքտրականացած տեղի ունեցած անօրինակ յաջողութեամբ—ցնծալիր աղօթքներով ու աղաղակներով օդն են թնդացնում։ Պատկառելի հանդէսը հոգևոր ու աշխարհիկ երգերի և նուագածութեան ձայնի ուղեկցութեամբ քաղաք է դառնում փառաբանելու տիրոջը, որ հայ աշխարհում այդպիսի մեծ գործ յաջողեցրեց։ Ժամանակի պատմիչը բառ չի գտնում արտայայտելու համար այն բարձր ոգևորութիւնն ու անհուն բերկրանքը, որ տիրում էր այն օրերում մայրաքաղաքի և ընդհանրապէս Հայոց աշխարհի մէջ։ «Երանելի ու ցանկալի Հայոց աշխարհն անպայման սքանչելի էր երևում այն օրերում. ամբողջ երկիրը լի էր սրտալիր ուրախութեամբ և ակնավայել տեսարանով»։

Հայերի այդ անսահման ուրախութիւնը շատ տեղին էր և հասկանալի։ Ազգերն իրանց պատմութեան ընթացքում շատ քիչ են այդպէս միահամուռ ուրախանում. մաղթանքի խունկը շատ քիչ է այնպէս անկեղծ ու անձնուէր գոհունակութեամբ դէպի երկինք բուրում։ Ամբողջ հայութիւնն յանձին իր թա-

գաւորի և իշխանների, կաթողիկոսի և հոգևորականութեան — մի արտասովոր, գերագոյն բողէի մէջ էր։ Հայկական տառերի գիւտը բաց էր անում հայի առաջ օտար ազգերի ամբարած հարստութիւնը, անցեալ սերունդների շտեմարանած իմաստութիւնը։ Ու համաշխարհային գրականութեան ու դպրութեան մէջ մինչև այդ ժամանակ զլխովին երևեալ հայը Մեսրոբեան այդ մի քանի տառերի շնորհիւ հնարաւորութիւն էր ստանում ինքն ևս հանդէս գալ իւր իսկ սեփական մայրենի լեզուով գրելու և կարդալու։

*
* *

Մեր իմաստուն և խելացի նախնիքը ամենաբնական կերպով են օգտւում նորագիւտ տառերից։ Մեսրոբն էր միայն իւր մի երկու աշակերտների հետ, որ հասկանում էր Հայկական նոր այբուբէնի գործածութիւնը և ըմբռնում էր այդ չոր ու ցամաք գծերի՝ նշանագրերի ներքին վեհ խորհուրդը։ Հարկաւոր էր բազմացնել, ստուարացնել իմացողների թիւը. հարկաւոր էր սովորեցնել, նոր պատրաստուած մարդիկ առաջ քաշել, որոնք կարողանային իրանց ցանկա-

ցածը գրել հայ լեզուով, հայ նշանագրերով։ Հիմք է դրւում մի խորհրդաւոր ու սրբազան հաստատութեան, հիմնարկւում է Հայկական առաջին դպրոցը։ որտեղ հայ պատանին պէտք է հայերէն գրել կարդալ սովորէր։ Հազարաւոր տարիների կեանքով ապրող հայը առաջին անգամ այդ օրը պէտք է դպրոց մտնէր, առաջին անգամ պէտք է իւր մայրենի լեզուի հնչիւնները դրոշմէր թղթի վրայ ու առաջին անգամ պէտք է կարդար։

Մենք երևակայում ենք Մեսրոբի հրճուանքն ու յուզմունքը, երբ նա իւր արիւն քրտինքի պտուղներն այդտեղ, այդ նորահաստատ դպրոցի մէջ վայելում էր, տեսնելով իւր գործի յաջողութիւնը։ Մինչև այդ օրերը մենք չենք ունեցել հայերէնի ոչ մի ուսուցիչ։ Դժբախտաբար, մեր քաղաքական կեանքի ամենավառաւոր շրջաններն անցան խուլ ու համր կերպով։ Հայոց լեռների ու ձորերի վրայով քայլող գնդերի արշաւանքներն ու գործողութիւնները, հայ իշխանի կեանքն ու ձգտումները, հայ քաղաքացու և գեղջուկի ապրուստն ու դրութիւնը մեզ ոչ մի հայ չկարողացաւ պատմել. միայն օտար պատմիչների հատ ու կտոր տեղեկութիւններն

են, որոնք լրիւ ոչինչ չեն տալիս։ Մեսրոբի գիւտն անսահման ցնծութեան մէջ էր դնում հային, իմացող և գրասէր հային։

Երբ Մեսրոբի աշակերտները բաւականաչափ վարժւում են Հայկական այբուբէնի գործածութեան մէջ, Սահակ կաթողիկոսն ու Մեսրոբը սկսում են բաց անել իրանց հարևան ազգերի՝ յոյների ու ասորիների գրական գանձերը և օտար լեզուներից սկըսւում է մի թարգմանչական գործունէութիւն՝ եռանդուն ու տենդային։ Նախ հարկաւոր էր ծանօթացնել հային օտար գրականութեան հետ. և ամենից առաջ Աստուածաշունչն էր, հայի նոր հաւատի՝ քրիստոնէութեան աղբիւրը, որ պէտք էր անմիջապէս հայերէն թարգմանել։ Չէ որ այդ ամբողջ շարժումը, տանջանքն ու տառապանքը հոգևոր կրօնական պահանջին բաւարարութիւն տալու համար էր. չէ որ Սահակն ու Մեսրոբը մի գերազոյն տենչով բռնուած էին հէնց այդ Աստուածաշունչը, Աւետարանն ու հոգևոր գործերը հայերէն ունենալու, որպէս զի հեշտութեամբ կարելի լինէր Քրիստոսի խօսքը քարոզել ու տարածել։ Այժմ եկել հասել էր ժամանակը. այժմ կար հնարաւորութիւն. և

մեր նախնիքը շատ խելացի կերպով են օգտուում այդ հնարաւորութիւնից։ Արտասահմանում՝ Յունաստանում, Ասորիքում և Եգիպտոսում յատուկ մարդիկ են ուղարկւում հմտանալու, վարժուելու հելլենական, ասորական դպրութեան և արուեստների մէջ, ուսումնասիրելու օտար լեզուները, որոնցով միայն կարելի էր ծանօթանալ օտար գրականութեան հետ։ Երկար տարիներ հայ երիտասարդները մնում են օտարութեան մէջ և գիտութեամբ ծանրաբեռնուած դառնում են Հայաստան իրանց բերած պաշարն հայացնելու, հայերէն թարգմանելու։

Ու սկսւում է մի գործունէութիւն, որի նմանն Հայաստանը չէր տեսել։ Պատրաստուած յունաբաններն ու ասորաբանները վերադառնում են Հայաստան ու իրանց երկու մեծ ուսուցիչների ղեկավարութեամբ սկսում են մի բեղմնաւոր ու արդիւնաւէտ թարգմանչական գործունէութիւն, որի համար և յաջորդ սերունդների կողմից ստանում են «Թարգմանիչներ» մեծ ու իմաստալի տիտղոսը։ Նախ թարգմանւում է սուրբ Գրքի գանազան կտորներից, իսկ ամբողջ սուրբ Գիրքը երկար տարիների անխոնջ աշխատանք

էր պահանջում։ Շնորհիւ թարգմանիչների՝ հետզհետէ ստեղծւում է Հայոց գրականութիւնը, ստեղծւում է մի գրական լեզու, որ իւր կանոնաւորութեամբ ու ընտիր յատկութիւններով ամբողջ յետագայ շրջանների համար դասական է մնում ու օրինակելի մինչև օրս։

Մեսրոբ շրջում է այնուհետև իւր մի քանի աշակերտների հետ Հայաստանի զանազան կողմերը, ամեն տեղ դպրոցներ է բաց անում, աշակերտներ հաւաքում և դրպրութեան ու գրական կեանքի սկիզբ դնում։ Նոյն եղանակով ոգևորուած նա այբուբէն է տալիս նաև մեր հարևան երկու ազգութիւններին, վրացիներին և աղուաններին, որոնք հայերի պէս մինչև այդ չունէին գիր ու գրականութիւն և շնորհիւ Մեսրոբ Մաշտոցի սկսեցին մտնել քաղաքակիրթ ազգերի շրջանը։

Հետաքրքիր է ու ուսանելի Մեսրոբի յետագայ կեանքը։ Եթէ սուրբ կոչուելու են պատմութեան մէջ այն անձնաւորութիւնները, որոնք մոռացած իրանց անձնականը ապրում են ու շնչում ընդհանուրի բարիքի համար, որոնք իրանց օրինակելի վարքով

ու եռագուրկ աշխատանքով հասարակաց բարիքն են ի նկատի ունենում — ապա ուրեմն Մեսրոբը իրաւունք ունի մեր ամենամեծ սուրբը կոչուելու։ Որովհետև այդ եզակի անձնաւորութիւնը ապրել ու գործել է ոգևորուած միմիայն ընդհանուրի բարիքով, նրան կեանքի էին կոչում և գործունէութեան մղում Քրիստոսի վարդապետութեան պարզ և յստակ պատգամները։ Այդ պատգամները հասարակութեանը մատչելի դարձնելը, ուրիշներին ևս իսկական ճշմարիտ քրիստոնեայ դարձնելը Մեսրոբի կեանքի նպատակն էր։ Այդ նպատակի իրագործմանն էր դիմում, երբ նա աշխարհէ աշխարհ ընկած հայ գրականութեան սկիզբն էր երկնում։ Այդ նպատակին էր նա մօտենում, երբ հայ անմշակ ու խոպան անդաստանի մէջ դպրոցներ էր բաց անում, վերջապէս այդ նպատակն իրագործուած էր տեսնում, երբ իւր առաջ ուխտացեալ երիտասարդների մի ստուար բազմութիւն էր գտնում, որ թարգմանչական տենչով բռնուած, օտար գանձերն էր հայացնում, օտար գրականութիւնների շահեմարանները բաց անում։ Ահա այդ մտքով Մեսրոբ մեր հայերիս ամենամեծ սուրբն է։

Նրա գիւար՝ կեանքի կոչուած հոգևոր պէտքին՝ քրիստոնէութեան պահանջներին բաւարարութիւն տալու, դարձաւ այնուհետև հայի լուսաւոր ու բախտաւոր ասողը, որ պիտի առաջնորդէր նրան դարերի երկար շարքի միջով, նրան ապաւէն ու նեցուկ լինէր, մխիթարէր նրան տառապանքի երկար օրերում, յուսադրէր լքման ծանր ու դժուար միջոցին։

*
* *

Ե. դարի այդ տարիները Հայոց քաղաքական բախտի տեսակէտից շատ անպատեհ էին։ Վռամշապուհի խաղաղ և իմաստուն կառավարութիւնից մի փոքր յետոյ Հայ Արշակունիների գահի վրայ է բազմում մատղահասակ Արտաշէսը, որը շատ հեռու էր երկիրը խելացի ու խոհեմ կառավարելուց, որովհետև անպատրաստ էր։ Իսկ հայ իշխաններն էլ լայն չափերով ի չարն էին գործ դնում կենդրոնական իշխանութեան թուլութիւնը և իրար հետ մշտական դժտութեան, անընդհատ հակառակութեան մէջ էին։ Իրերի այս անպատեհ ու խառնակ դրութիւնից օգտուողը օտարներն էին ու յատկապէս պարսիկներն ու յոյները։

Դեռ չորրորդ դարում Հայաստանը բաժանուած էր այդ երկու պետութիւնների մէջ՝ Յունաստանի և Պարսկաստանի, որոնց մշտական և ուժգին մրցութեանը թոյլ ու անպաշտպան Հայաստանը վերջ ի վերջոյ զոհ գնաց։ Բաժանուածութեան արդիւնքն այստեղ այն է լինում, ինչ որ ամեն տեղ. պարսիկներն իրանց մասում են հային խեղդում, թագաւորութեանը վերջ դնում, նոյնն անում են յոյներն իրանց մասում։ Եւ արդիւնքն այն է լինում, որ Ե. դարի կիսում արդէն ամբողջ Հայաստանից վերացուում է հայկական անկախութիւնը և Հայաստանը կառավարուում է օտար ու բնիկ վարիչներով։

Սակայն բախտը տարօրինակ խաղեր ունի. այն օրերին, երբ գունատուում էր Հայոց արքաների ծիրանին, երբ Արշակունիների գահը ընդմիշտ թափուր էր դառնում և Հայաստանը կորցնում էր իւր քաղաքական անկախութիւնը և բաժանուում միւս պետութիւնների մէջ թուլացած, նուաղած — այդ օրերին հայ միտքն ու հոգին լարում էր իւր զերադոյն ճիգերը հիմք դնելու մի նոր ու աւելի հաստատուն կեանքի, որն յաղթելու էր այնուհետև ոչ միայն Յունաց

և Պարսից բռնապետներին, այլ և բոլորին, որոնք կըզային հայի մաքի և հոգու անկախութիւնը խախտելու։ Կորաւ մեր քաղաքական անկախութիւնը, բայց դրա փոխարէն ս. Մեսրոպ և ս. Սահակ մեզ տուին մի զէնք, որով մենք աւելի պիտի պարծենայինք ու մեր փառքը համարէինք, որով զինուած մենք պիտի դէմ դնէինք մեր ամենավայրագ թշնամիներին ու ժամանակաւոր հաց ու կոր պարտութիւնների մէջ դարձեալ վերջնական յաղթողը դուրս գայինք։

Յետագայ մեր ամբողջ պատմութեան ընթացքում հակայի նման բարձրանում է ս. Մեսրոպի լուսարձակ դէմքը, որից դուրս ելած ճառանչները լուսաւորում են Հայոց մտայլ և խաւար մթնոլորդը։ Մեր հոգու, մեր մաքի առաջ միշտ պայծառօրէն կանգնած են մեր ազգի երկու մեծ սրբերը—ս. Մեսրոպ և ս. Սահակ, որոնց հովանաւորութեան տակ ծաղկում է մեր գիրն ու գրականութիւնը, դպրոցն ու դպրութիւնը։

*
* *

Ս. Էջմիածնից 12 վերստ հեռու՝ Քասախի ձորափին ընկած է հինաւուրց մի գիւղ՝ Օշականը, որն Ե. դարում Ամատունի իշխանների կալուածքն էր։ Այդտեղ, Օշական գիւղի եկեղեցու կամարների տակ, ներքնայարկ մի սենեակում հանգստանում են Հայաստանի ամենամեծ մարդու՝ ս. Մեսրոբի նուիրական նշխարները։ Դարեր շարունակ նուիրական է եղել այդ վայրը հայութեան համար։ Նա նուիրական է դառնում մանաւանդ այժմ, երբ հայութեան բովանդակ հատուածները միահամուռ կերպով գալիս են ուխտելու այդ մեծ մարդու և նրա նշանաւոր գիւտի հազար հինգհարիւր ամեայ յօբելեանը։

Հազար հինգհարիւր տարի անցել է այն օրից, երբ ս. Մեսրոպ երկնեց հայկական սեփական գրերը և գրանով իր մեծ ուսուցչի՝ ս. Սահակի հետ սկիզբ դրեց Հայկական գրականութեանը։ Այսօրուայ հայը անհուն բերկրանքը սրտին ուխտի պիտի գնայ Օշական, համբուրելու սրբազան նշխարներն այն մարդու, որը երջանիկ էր առաջին անգամ հայերէն տառերով գրելու, որը մեր առաջին թարգմանիչն էր, առաջին հեղինակը և առաջին ուսուցիչը։

Ս. Մեսրոբի նշանաւոր գիւտից անցել է այժմ տասն և հինգ դար։ Այդքան երկար ժամանակուայ ընթացքում Հայաստանն ու հայ ժողովուրդը բազմազան բախտերի է հանդիպել, բայց ս. Մեսրոբի աւանդը չէ թողել երբէք։

Հայաստանն 5 րդ դարից այս կողմը ստիճանաբար արիւնաքամ է եղած երբեմն նենգ ու նախանձոտ հարևանների՝ յոյների ու պարսիկների ձեռքից, երբեմն ընչաքաղց, անհանգիստ եկեղեցիների՝ արաբների ու Թուրք ցեղերի մէջ։ Արաբների տիրապետութիւնը, որ Հայաստանում 7-րդ դարից սկսուելով շարունակուեց մինչև 10-րդ դար, յետագայ շրջանների հետ համեմատած, կարելի է տանելի համարել։ Հէնց որ նուաճողական գործողութիւններն աւարտում էին, արաբներն սկսում էին երկիրը վերաշինել, կարգ ու կանոն վերահաստատել. իրանք ուսումնասէր մարդիկ լինելով, նուաճած երկիրներն ևս իրանց քաղաքակրթութեանն էին ենթարկում։ Այդ է պատճառը, որ յիշուած դարերում Հայոց գրականութիւնը գնալով ճոխանում, զարգանում է։ Ճիշտ է, ժամանակի պատմիչները ողբի և աղաղակի մի ամբողջ

Ս. ՍԱՀԱԿ

աշխարհ են հանդէս բերում արաբական տի-
բասլեաութեան օրերին, բայց հէնց նոյն
պատմիչների գոյութիւնը և նրանց հատու-
կաոր տեղեկութիւնները վկայում են, որ
Հայաստանը արաբական իշխանութեան շըր-
ջանում համեմատաբար խաղաղութիւն էր
վայելում և գրական-քաղաքակրթական
կեանքն այն ժամանակ դանդաղ, բայց մըշ-
տական զարգացման մէջ էր։ Արաբական
պետութեան ներքին էութեանն ու առանձ-
նայատկութիւններին պէտք է վերագրել նաև
այն հանգամանքը, որ Հայաստանում կարող
էին մի քանի փոքրիկ տեղային իշխանու-
թիւններ կազմուել, որոնցից կարևորն ու
նշանաւորը Բագրատունեաց թագաւորու-
թիւնն եղաւ Անիում։ Այսօրուայ Անին իւր
հոյակապ անցեալի բեկորներով Հայկական
ուրոյն կուլտուրայի պերճախօս վկայ լինե-
լով, միևնոյն ժամանակ լքացորոշ ու պար-
զօրէն մեզ պատմում է արաբական քաղա-
քակրթութեան մասին, որ գոյութիւն է ու-
նեցել Հայաստանում։

Մինչև 10, 11-րդ դարը թէև շարունակ
թուլանալով և նուազելով, բայց և այնպէս
ընդհանուր առմամբ դեռ պահել է հայ ժո-

ղովուրդը իւր ամբողջութիւնը, կռուելու և
դիմադրելու իւր ներքին կարողութիւնը, սո-
վորեցնելու տրամադրութիւնն ու պատրաս-
տակամութիւնը։

Բայց սկսած 11-րդ դարից բոլորովին
փոխւում է թէ Հայաստանի և թէ հարևան
երկրների վիճակը։ Այդ դարումն էր, որ Ա-
րևելքից — ասիական մեծ ու անսահման դաշ-
տավայրերում թափառող Թուրքական ցեղե-
րից հատուածներ են պոկւում գալիս դէպի
Արևմուտք, դէպի Պարսկաստան, Հայաստան,
և Փոքր Ասիա, այնտեղ ուղղելով իրանց ան-
կուշտ հայեացքն ու սպանիչ զէնքը և սար-
սափելի անդուսպ հեղեղի նման բարդ առ
բարդ անպարպելի եռանդով ու թարմ ուժով
թափւում են փարթամ ու հարուստ Արևմուտքի վրայ, ճանապարհին ամեն բան կրակի
ու աւերածի զոհ դարձնելով։

Եկողները բարբարոսներ էին, որոնց
դրոհի առաջ զոհ են դառնում Արևելքի ամե-
նագեղեցիկ քաղաքներն ու յիշատակարան-
ները։ Թուրքական այդ ցեղերը յայտնի են
պատմութեան մէջ Սելջուկ անունով։ Իրանք
չունենալով որ և է քաղաքակրթութիւն, թըշ-
նամի և հակառակորդ էին ամեն տեսակ կարգ

ու կանոնի։ Նրանց զօրութիւնը՝ կրակի ու արեան, սրի և աղեղի վրայ էր հիմնուած։ Միւս երկիրների հետ Հայաստանն ևս արիւնաքամ է լինում, զրկւում իւր բարեբեր դաշտերից, շէն քաղաքներից ու նրա մէջ ապրող ժողովուրդը հիւծւում, ուժասպառ է դառնում սելջուկների նիւթական անծայր շահատակութիւններից։

Յաջորդ դարերը Հայաստանի համար մի ուրիշ սոսկալի պատուհաս է բերում — մոնղոլական կամ թաթարական արշաւանքը։ Թաթարները նոյն թուրքական ցեղերի յետագայ սերունդներն էին, աւելի յանդուգն ու արկածախնդիր, աւելի մեծ մաքերով ու նուաճողական լայն ծրագրերով։ Բաւական է յիշել Չինգիզ խանի և Լէնկ-Թեմուրի անունները, որ Արևելքը դեռ այսօր էլ սարսափի։ Թաթարները բոլորովին ոչնչացնում են քաղաքակրթութեան այն մնացորդները, որ սելջուկների բարբարոսութիւնից դերծ էին մնացել։ Միջին և Առաջաւոր Ասիան նրանց կարող և խորտակիչ սրի տակ տխուր աւերակների մի շեղջակոյտ դարձաւ։ Արևելքը կարծես ամայացել էր. վաճառաշահ հարուստ ու փարթամ շահաստանները կողոպտուեցին,

հոյակապ ու հաստապինդ շէնքերը խորտակուեցին։ Մոնղոլների հասցրած հարուածներից դլուխը կորցրած Արևելքը դեռ շատ դարեր չպիտի ուշքի դար. այդ կարճահասակ ու դաճաճ մոնղոլները Արևելքի քաղաքակրթութեան ընթացքը երկար ժամանակով յետ պահեցին։

Թուրք թաթարական ցեղերի աւերն ու կոտորածը շարունակուեցին մինչև 15-րդ դարը։ Բայց դրանից յետոյ խաղաղ ու հանդիստ օրերը չէին, որ պիտի վայելէր Հայաստանը։ Սկսած 15-րդ դարից մինչև 18-րդ, մինչև 19-րդ դարի առաջին տասնամեակները Հայաստանը կռուախնձոր է լինում Պարսկական և Օսմանեան պետութիւնների մէջ։ Ընկած լինելով երկու թագաւորութիւնների մէջ տեղում, բնականաբար Հայաստանը պէտք է կռուախնձոր լինէր և բոլոր սահմանային կռիւների բուն պատճառը։ Միայն 19-րդ դարն է, որ Առաջաւոր Ասիայում, դրա հետ միասին և Հայաստանում տաճելի խաղաղութիւն է մտնում։ Այս ժամանակ է միայն, որ Հայաստանի սահմանները մի փոքր աւելի տեսական կերպով են որոշւում և Հայաստանը բաժանւում է

Ռուսաստանի, Տաճկաստանի և Պարսկաստանի մէջ։

Այսպիսով տեսնում ենք, որ հայ ժողովուրդը Արշակունեաց թագաւորութեան անկումից յետոյ հետզհետէ ակնառաես է եղել, թէ ինչպէս իւր վրայով եկել անցել են բազմաթիւ ժողովուրդներ, տարբեր լեզուներով և սովորութիւններով, տարբեր կրօնով ու դաւանութեամբ, քաղաքակրթութեան և զարգացումի զանազան աստիճաններով։ Եղել են ժամանակներ, երբ հայը ամեն բան կորցնելու վտանգի մէջ է եղել. և՛ լեզուն, և՛ ազգային առանձնայատկութիւնները, և՛ եկեղեցին ու կրօնը. եղել են ամբողջ դարեր, երբ ս. Մեսրոբի հրաշալի գիւտը կարծես լռել է։ Ֆիզիքական գոյութեան կռուի մէջ ընկած ու տարուբերուող ժողովրդի համար շատ անգամ գիրն ու գրականութիւնը, մտաւոր ու հոգեկան շարժումը գերմարդկային է երևում։

Ու գերմարդկային վարկեաններ բաւականաչափ ունի Հայոց պատմութիւնը։ Իւր բազմադարեան տանջանքի ու գերութեան, իւր հազարամեայ տառապանքի օրերին հայ ցեղը կարողացել է իրան պահել, ֆիզիքա-

պէս ապրել ու չանհետանալ, չոչնչանալ։ Դա էլ հերոսութիւն է. դարեր տևող թալանի ու աւերածութիւնների մէջ ապրել, հաղար տարիներից ի վեր ակնառաես վկայ և առարկայ լինել զանազան ցեղերի ընչաքաղց կռիւների ու ասպատակութեանց, հետզհետէ քամուել ու հիւծուել, բայց և այնպէս ապրելու մի անդիմադրելի ուժեղ մղումով տարուած յաղթել այդ բոլոր խոչընդոտներին ու հասնել մինչև այսօր — դա լուռ ու անաղմուկ, համր հերոսութիւն է։

Հայ ցեղի ֆիզիքական կեանքն աւելի բովանդակութիւն է ստանում և նրա անցեալը մեզ աւելի բարձր երևում, երբ ինկատի առնենք, որ հայը իւր ֆիզիքական գոյութեան հետ պահել է նաև իւր հոգեկան — ներքին անկախութիւնը։

Մինչև անգամ ամենագառն օրերին, աւերածութիւնների ու տառապանքի ամենասև ճգնաժամին էլ Հայաստանում եղել են անկիւններ, ուր մեր նախնեաց նուիրական աւանդը՝ հայ գիրն ու դպրոցը շարունակուել է փայլփլալ։ Վանքերի և մենաստանների, այրերի ու քարանձաւների մէջ միայն կարող էր ապրել մեր անցեալի գիրն ու գրա-

կանութիւնը, դպրոցն ու դպրութիւնը։ Դարեր շարունակ գրական մտաւոր կեանքն հազիւ է պահել իւր գոյութիւնը։ Հազիւ են գտնուել մի քանի վանականներ, որոնք աշխարհի խառնակ ու անապահով դրութիւնից վանքերն ու մենաստաններն ապաւինելով, գրի են անցրել ու յաջորդ սերունդներին հաղորդել իրանց ժամանակի անցքերը, պարբերական դէպքերը։ Աւելի շատ են եղել այնպիսիները, որոնք զուրկ լինելով ստեղծելու, յօրինելու շնորհքից, ուրիշի աշխատանքն են արտագրել։ Մեր աշխարհի երկարատև միջնադարեան երկնակամարի վրայ ժամանակ առ ժամանակ աստղեր են առկայծում, որոնք իրանց փայլով մի ըսպէ լուսաւորում են անթափանց խաւարը ու նոցից մարում։ Դրանք մեր դպրոցներն են, «անապատները», ուր հանդէս է գալիս մի վարդապետ, ուսուցիչ և գիտնական, պարապում է գրականութեամբ, ուսումնասիրում է անցեալի յիշատակարանները, մեր նախնիքների գործերը, ինքն ևս հետևում է նրանց օրինակին, պարապում է գրականութեամբ և գրքեր գրում։ Նրա շուրջն են հաւաքւում ուսումնածարաւ պատանիներ և երիտասարդ-

ներ ուսանելու հռչակաւոր ուսուցչի իմաստութիւնը։

Այդպէս են եղել մեր միջնադարեան դպրոցները ու այդ դպրոցների մէջ է պարփակուել մեր ամբողջ գրական մտաւոր հոգեկան կեանքը. այդտեղ է ապրել ու զարգացել հայ գիրքը։

*
* *

Մարդիկ մինչև 15-րդ դարը գաղափար չունէին տպագրութեան մասին։ Մեր նախնիքն ուրեմն Հայկական գրերի գիւտից յետոյ 11 դար շարունակ տպագրուած գրքի երես չեն տեսել։ Գիրքը տարածուել է արտագրութեան միջոցով, վանքերում եղել են մարդիկ, որոնք զբաղուած են եղել արտագրութեամբ։ Մեր օրերում արտագրութիւնը, այն էլ մեծ ու հատ հատորների արտագրութիւնը ծանր ու սրտամաշ պարապմունք է. բայց առաջ, երբ դեռ տպագրութիւնը չէր հնարուած, մարդիկ առանձին եռանդով ու երկիւղածութեամբ էին արտագրում. որովհետև բացի կրօնական բարոյական մխիթարութիւնից, գիրք գրողն ու արտագրողը այն բարձր գիտակցութեան տէրն էր, որ դրանով պահում պահպանում է

ազգային գրականութիւնը, շարունակում է նախնիքների սկսած մեծ գործը և եկող սերունդներին աւանդում անցեալի յիշատակարանները։ Գիշեր ցերեկ աքնելով շատ անգամ վանական ճրագի աղօտ լոյսի տակ կորացած, արտագրւում էին հինգերորդ ու յետագայ դարերի յիշատակարանները։ Այդ եղանակով հետզհետէ կազմւում է մի հրաշալի ձեռագիր գրականութիւն, որի անշուշտ մի փոքր մասն է այսօր մեր ձեռքում մնացել։ Այսօրուայ ձեռագիր մատենադարանները (ս. Էջմիածնում, Վենետիկում, Վիեննայում, Երուսաղէմում, Պոլսում, Փարիզում...) մեզ մօտաւոր գաղափար են տալիս միջին դարերի գրական դժուարին և ծանր պարապմունքի մասին։

Գիրքն ուշ էր գրւում, դժուար էր առաջ գալիս, ծանր էր տարածւում և շատ թանգ էր ծախւում։ Այնպիսի հանգամանքներ էին դրանք, որ համարեա անյաղթելի խոչընդոտներ էին հանդիսանում գրքի զարգացման համար։ Կարծես մի որոշ դասակարգի սեփականութիւն էր դարձել գիրքը. նախ՝ վանքի, որտեղ նա գրւում, արտագրւում էր— որտեղ նա ստեղծւում էր, և ապա ունևորների, որոնք միայն գնել և նրա ներքին արժէքը ըմբռնել կարող էին։ Միջին դարերում գիրք արտագրել տալը մեծ բարեգործութիւն էր համարւում, որովհետև թանգ էր և ամեն մարդու ուժերից վեր։

*
* *

Դրութիւնը փոխւում է 15-րդ դարում, երբ տպագրութիւնն է հանդէս գալիս։

Գերմանական շէն ու շքեղ քաղաքներից մէկում՝ Հռենոսի ափերին փռուած Մայնց քաղաքում 14-րդ դարի վերջին՝ 1397 թուին մի մարդ է ծնւում—Յովհան Գուտտենբերգ, որն և դառնում է մարդկութեան ամենամեծ բարերարներից մէկը։ Պատմութիւնից յայտնի է, որ մինչև Յովհան Գուտտեմբերգի գիւտը, ասիական ազգութիւններն ունեցել են տպագրութիւն, յատկապէս չինացիները։ Բայց չինացիներն, ինչպէս ամեն բան, այնպէս էլ տպագրութեան արուեստը իբրև պետական գաղտնիք իրանց մէջ են պահել և միւս ազգութիւններին չեն հաղորդել, այնպէս որ եւրոպական ազգութիւններից ոչ մէկը տեղեակ չէր տպագրութեան գործին Յովհան Գուտտեմբերգի գիւտից առաջ։

Գուտտեմբերգը իրանից առաջ եղած մի քանի թոյլ փորձերն աչքի անցկացնելով տարբում է ամբողջապէս շարժական մետաղեայ տառերով տպելու գաղափարով և 1436 թուին հնարում է այդ տառերը։ Այնուհետև մինչև առաջին տպագրուած գրքի լոյս տեսնելը անցնում է դարձեալ 14 տարի և 1450 թուին հանդէս է գալիս առաջին տպուած գիրքը—Աստուածաշունչը։

Գրքերի տարածման, ժողովրդականացման և էժանացման ամենամեծ արգելքներից մէկը վերացել էր. գտնուած էր տպագրութեան մեծ ու հոյակապ արուեստը և հիմք էր դրուած քաղաքակրթական մի նոր հաստատութեան՝ տպարանին։ Այնուհետև եւրոպական ազգերը մինչև այդ ժամանակ չտեսնուած արագութեամբ զարգացնում, ծաղկեցնում են գրականութիւնը։ Բազմանում են տպարաններն և գրքերը հազարներով ու տասնեակ հազարներով ցրւում ազգաբնակութեան զանազան խաւերի մէջ։ Գիրքը դուրս է գալիս վանքից ու մենաստանից. հեղինակն ու թարգմանիչը լինում են հետզհետէ նաև աշխարհականներ, և գիրքն ու գրականութիւնը թէև աստիճա-

նաբար, բայց հաստատուն ու վճռականօրէն բռնում է ժողովրդականացման փրկարար ուղին։ Յովհան Գուտտենբերգը դառնում է մարդկութեան մեծագործ բարերարը։

*
* *

«Գուտտենբերգի մահից միայն 44 տարի յետոյ՝ 1512 թուին լոյս է տեսնում նաև հայերէն տպագրուած առաջին գիրքը։ Ուրեմն այս տարի լրանում է ուղիղ չորսհարիւր տարի այն օրից, երբ մինչև այժմ մեզ հասած տեղեկութիւնների համաձայն առաջին հայերէն գիրքը տպուեց։

Մեզ արդէն յայտնի է Հայաստանի վիճակը 15-րդ, 16-րդ դարերում։ Աւերի և սրածութեան մի հայրենիք էր դա։ Պարզ է, որ չէր կարող խաղաղ կուլտուրական աշխատանքն այնպիսի երկրում բուն դնել ու յարատև զարգացման ուղին բռնել։ Երկրից դուրս էին եկել և դեռ շարունակում էին դուրս գալ զանազան հատուածներ—գաղթականութիւններ, գնում, ցրւում էին զանազան կողմեր, իրանց համար նոր հայրենիք էին գտնում, թէև օտար՝ բայց աւելի ապահով ու հանգիստ, որտեղ կարող էին

գոնէ՝ իրանց կեանքն՝ ու համոզմունքները, իրանց ազգութիւնն՝ ու անպահովութիւնը պահել՝ պահպանել՝ թէև՝ իհարկէ կարճ ժամանակով։

Երբէք չպիտի զարմանանք, որ առաջին հայ գիրքը տպւում է Հայաստանից դուրս, իտալական երկնքի տակ, Վենետիկ մեծ ու վաճառաշահ քաղաքում։ Դժբախտաբար մեզ մինչև օրս յայտնի չէ, թէ ով կեանք տուեց հայերէն առաջին տպագրուած գրքին։ Ոչ մի տեղեկութիւն չկայ այն մարդու մասին, որ Վենետիկում 1512 թուին տպագրում է «Պարզատումարը» վերնագրով առաջին հայ գիրքը։ Այդ գիրքն հետևում էր գործնական նպատակների, որովհետև «Պարզատումարը» ժողովրդական մի օրացոյց էր՝ սահմանուած հայ հասարակութեան աւելի լայն խաւերի համար։ Հետևեալ տարին դարձեալ Վենետիկում լոյս են տեսնում մի քանի ուրիշ գրքեր ևս և այնուհետև հայ գրքի տպագրութեան վայրերը փոխւում են, բազմանում։ Տպագրութեան սկզբնական շրջանում զանազան երկիրներում ցրուած հայկական գաղութներն էին, որոնք առժամանակ պահպանում էին հայ գիրքը։ Օտար

քաղաքներում ու մեծ մասամբ օտարների տպարաններում էր, ուր լոյս էր տեսնում հայ գիրքը ու այնտեղից տարածւում դէպի ամեն կողմ։ Վենետիկ ու Պոլիս, Փարիզ ու Մարսել, Լիվոռնո և Միլան, Նոր Զուղա և Մադրաս, Տրիէստ Վիեննա, Ամստերդամ ու Զմիւռնա... փոփոխակի բախտերով հիւրընկալում են հայ գիրքն ու տպարանը։

Գուտենբերգի գիւտը այդ բոլոր օտար վայրերում օգնել ու օժանդակել է հայ գրքին, որը շատ անգամ օտար ու անհիւրընկալ հորիզոնների տակ ստիպւում է եղել դժուարանցանելի ուղիներ բռնել ու ծանր պայմանների մէջ ապրել։ Տեղերը յաճախակի փոխելով, երբեմն հարաւի պայծառ երկնքի տակ, յարմարաւոր ու գոհ, երբեմն հիւսիսի մշուշապատ երկնակամարի մռայլ հորիզոնների մէջ — երկու դէպքումն էլ օտար ու բուն երկրի կարօտը ճակատին — միշտ առաջ է գնացել հայ գիրքը, արձագանք տալով հայ ժողովրդի, հայ մտաւորականութեան ժամանակակից պահանջներին, միշտ հոգևոր ու մտաւոր սնունդ տալով այն ժողովրդին, որին ծառայելու համար հանդէս էր եկել։

Համարեա բոլոր հայ գաղութներում երևան է եկել նա, համարեա ամենուրեք ուղեկցել է նա հային ու այդ հանգամանքը քան առաւել որևէ այլ բան պատիւ է բերում հայ ցեղին, յառաջադիմելու, քաղաքակրթուելու նրա տենչանքին։ Սակայն նա հանդստանալ կարող էր վերջիվերջոյ բուն իսկ հայրենիքում. և երբ նա միանգամ այստեղ հաստատուեց, այլ ևս չէր թողնելու հայ իրականութիւնը։

Ճիշտ է, օտար վայրերում նա ունեցել է երբեմն ծաղկման շրջաններ, տուել է առատ պտուղներ, երբեմն օտար հորիզոնների տակ նա եղել է լուսաւոր ասող հայրենիքում խարխափող ժողովրդի համար, բայց նրա ազատութիւնն ու ուրախութիւնը պէտք է որոնել բուն իսկ հայրենիքում, հայ ժողովրդի մէջ, նրա ցաւերին ու դարդերին գիտակ և կարեկից, նրա ուրախութիւններին ու բերկրանքին խնդակից։ Հայ մատեանը իւր բուն դերի մէջ կարող էր մտնել միայն հայ իրականութեան սահմաններում։ Եւ այն օրից նա յառաջադիմել է մերթ դանդաղելով ու յամրընթաց, մերթ սրընթաց և ոստիւններով—բայց միշտ յառաջխաղաց, միշտ

անշեղ իւր կէտ նպատակին դիմելով։ Անշուշտ շատ ազգերի մենք կարող ենք նախանձով նայել ու տեսնել, ինչքան արդիւնք, ինչպիսի հարստութիւն են հանդէս բերել նրանք թերևս աւելի կարճ ժամանակում քան մենք հայերս չորս դարում։ Բայց ով ինկատի ունենայ հայ ցեղի և իրականութեան մարտիրոսագրութիւնը, ով չմոռանայ այն անբնական ու դժուարին կացութիւնը, որի մէջ դրուած է եղել հայ ազգը այդ միջոցին, նրա սիրտն անշուշտ մի անհուն բերկրանքով կլցուի, որ հայն ունեցել է դեռ քաջութիւն և արիութիւն տանելու բախտի հարուածները, փրկելու իւր մտաւոր ու հոգեկան կեանքը, ազատելու իւր գիրքը մարտիրոսագրութիւնից ու բերելու մեզ հասցնելու։

*
* *

Մեր պատմութեան մէջ երկու շրջան կայ, որոնք իրարից թէև հազար տարով հեռու, բայց իրար հետ ներքուստ սերտօրէն կապուած են ու իրար լրացնում են. դա հինգերորդ դարի սկիզբն է ու տասնվեցերորդ դարի սկիզբը։ Ս. Մեսրոպ հնարեց հայի

այբուբէնը, ուղղութիւն տուեց հայ գրականութեանը, թարգմանիչներն ու նրանց աշակերտները զարգացրին, շարունակեցին այդ գործը, Հայաստանի զանազան մասերում հիմնեցին դպրոցներ, աշակերտներ ժողովեցին ու Հայաստանի մայր մտնող քաղաքական աստղից յետոյ Հայոց երկնակամարում վառեցին մի այլ աստղ, աւելի տևական ու դիմացկուն, աւելի կենսունակ ու փայլուն. դա մեր մտաւոր, հոգեկան կեանքն էր, որ Ե. դարում այնպէս հզօր սկիզբ առաւ։

Իսկ 16-րդ դարի սկիզբը—թէև Հայաստանից դուրս, լուռ ու անաղմուկ, նոյնիսկ աննկատելի, բայց ապագայի համար անգնահատելի, մի գործ էր կատարւում. ս. Մեսրոպի ստեղծած գիւտին մի աներևակայելի ասպարէզ էր տրւում, տպագրւում էր առաջին հայերէն գիրքը. որը դուրս գալով իւր ակամայ բանտարկութիւնից հնարաւորութիւն էր ստանում հեռագիրեալ լինելու ամեն տեղ և դառնալու ամենքի սեփականութիւնը։

Ներկայ թուականը մեզ մի հոյակապ առիթ է տալիս տօնելու հայ գրի հազարհինգհարիւրամեակը և Հայկական տպագրութեան չորսհարիւրամեակը։ Այսօր Հայ դպրոցն ու գրականութիւնը, Հայ մտաւորականութիւնն ու ժողովուրդը տօնում է իւր գրի և գրքի մեծ ու բազմադարեան յոբելեանը։

Մի անգամ ևս մեր մտքով անցկացնելով մեր բազմատանջ և չարաչար տառապանքով լի անցեալը, մխիթարուած կարող ենք այսօր դէպի առաջ նայել և երախտագիտութեան մի անհուն զգացմունքով լցուել դէպի մեր նախնիքը, որոնք անցեալ փառքի բեկորների կողքին մեզ բերել հասցրել են մեր ազգային գանձերից ամենից մեծը – մեր լեզուն ու գրականութիւնը, մեր գիրն ու դպրութիւնը։

Մռայլ խոհերի, սև յուսահատութեան մի անցողակի բոպէում թերևս կարողանար Հայ բանաստեղծն ասել.

Մեզ ինչ թողին մեր քաջարի գոված նախնիք,
Լացի, կոծի, անփառունակ մի հայրենիք.

Բայց այդ տրամադրութիւնը մեզ հաժակել չի կարող, որովհետև այսօր աւելի

քան երբեմեցէ երևան է գալիս մեր նախնիքների ամենամեծ աւանդը, որին մենք այդպէս գորովով փարել կարող ենք, որով մենք հպարտանալ և ոգևորուել կարող ենք. դա հայ գիրն է ու հայ գիրքը։

Փառք ու պատիւ նրանց, որոնք երկնեցին Հայ գիրն ու գրականութիւնը, արհամարեցին անձնականն ու նիւթականը ու երկար և ձիգ զոհողութիւնների միջով առաջ տարան Հայ գրքի գժուարին գործը և մեզ այսօր եղակի առիթ տուին տօնելու Հայ գրի և տպագրութեան այդ պանծալի հանդէսը։ Դա անզուգական տօնն է ամենքի, որոնք այդ դարերի շարքի մէջ աշխատել են ու նպաստել Հայ մտքի մշակման, Հայ հոգու լաւագոյն արդիւնքների, Հայ յոյզերի առողջ զեղումների. դա համայն հայութեան լաւագոյն մտքերի, ազգային մտաւորականութեան փառապանծ տօնն է։

Բագրատ Հայոց
Մեսրոպ Դպրոց

ՑՈՐԵԼԵՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

Հայ գրի եւ տպագրութեան այս Մեծ Յոբելեանը արժանավայել ու փառաւոր տօնելու, տօնի նշանակութիւնն ու պատմական արժէքը ժողովրդականացնելու, այլ եւ Մեծ Յոբելեանը զանազան հասարակական ու անհատական ձեռնարկութիւններով յաւերժացնելու համար Էջմիածնի Յոբելենական Յանձնաժողովը որոշեց դիմել Վեհափառ Կաթողիկոսին եւ խնդրել, որ բարեհաճի առաջիկայ տարին յայտարարել Յոբելենական Տարի, ինչպէս որ դա նման դէպքերում սովորական է Եւրոպայում։

Վեհափառ Հայրապետը բարեհաճեց յարգել Յանձնաժողովիս խնդիրը եւ պատուիրեց բաց անել Յոբելենական Տարին այս աշնան, Թարգմանչաց տօնին, հոկտեմբերի 13-ին, ինչպէս որ արդէն յայտարարուած է։ Բացման հանդէսները ամեն տեղ կատարուելու են Էջմիածնի Յոբելենական Յանձնաժողովի մշակած ծրագրով։ Իսկ առաջիկայ տարուայ աշնանը, դարձեալ Թարգմանչաց տօնին, կը լինին մեծ հանդիսաւորութեամբ Յոբելենական Տարուայ փակման հանդէսները։

Յոբելենական Տարուայ ընթացքում՝ հնարաւորութիւն կըտրուի բոլոր հաստատութիւններին, հաստատութիւններին, ուսումնարաններին ըստ տեղի ու ժամանակի յարմարութեան՝ զանազան հանդէսներով, դասախօսութիւններով եւ այլ ձեռնարկութիւններով իւրովանն մնանակցել տօնախմբութեանը։ Այդ ժամանակուայ ընթացքում՝ հնարաւորութիւն կունենանք ֆոնդերի գործը առաջ մղելու եւ՝ զանազան գրական, գիտական եւ ժողովրդական հրատարակութիւններով տօնի յաւերժացմանը նպաստելու։ Շատ ցանկալի էր նոյնպէս աշակերտական եւ մեծերի էքսկուրսեանները եւ ուխտագնացութիւն կազմակերպել դէպի ս. Մեսրոպի հանգստավայրը, Օշական։

Սրանով խնդրում՝ ենք բոլոր վայրերի հայ հասարակութեանը իւր կարողութեան չափով նպաստելու փառաւոր կերպով տօնելու մեր գրի եւ գրականութեան, գրքի ու տպագրութեան [illegible] տօնը։

Ս. Էջմիածնի Յոբելենական Յանձնաժողովի նախագահ՝ Դարբաս. Տէր Մելքիսեան.

Գեղարուեստական Խորհրդի Խորհրդ Ալթունեան.

Հայ. Գրի եւ Գրականութեան Պետական Թանգարան
Государственная Библиотека
Армянского Алфавита и Литературы
Имени Маштоца

«Ազգային գրադարան»
NL0120494